ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2020 թվական թիվ 172 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ 100 ՏՈԿՈՍ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺՆԻ ՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով “Բաժնետիրական ընկերությունների մասին” ՀՀ օրենքի 49-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2011թ. մարտի 3-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2020 թվականի հունիսի 1-ի թիվ 01/3-3/7992-2020 գրությունը

ո ր ո շ ո ւ մ ե մ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային ընկերությունների 2019թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի չափերը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ընկերությունների տնօրեններին սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ քան մինչև ս/թ հոկտեմբերի 1-ը, ապահովել շահութաբաժնի փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200424 հաշվին:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ Ա.Բաբլումյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

6/10/2020

X

Signed by: CHOBANYAN HAYK 1503730050

2020 թ. հունիսի 10